ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

Երևան
«ԱՍՈՂԻԿ»
2016

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37
Ա 597

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորմամբ

Գրախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր
ՌՈՒԲԵՆ ՆԱՂԴՅԱՆ

Գիտական խմբագիր՝
հոգեբանական գիտությունների թեկնածու
ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա 597 **Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր** (գիտական հոդվածների ժողովածու). - Եր.: «Ասողիկ» հրատ., 2016.- 280 էջ:

Սույն ժողովածուում ներկայացված են ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների հոդվածները: Ժողովածուում ընդգրկվել են անձի հոգեբանության հիմնահարցերին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ: Դիտարկվում են անձի ձևավորման և կայացման գործում զարգացման, սոցիալական, մշակութային և էքզիստենցիալ խնդիրներ:

Հոդվածների ժողովածուն կարող է օգտակար լինել անձի հոգեբանության ոլորտով հետաքրքրված մասնագետների և ուսանողների համար:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37

ISBN 978-9939-50-308-0

© Երևանի պետական համալսարան, 2016
© Խաչատրյան Ն. (խմբ.), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նարինե Խաչատրյան
ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 9

Սվետլանա Հարությունյան
ՆԱՐԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 16

ԱՆՁ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիլիթ Գարգրցյան
ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 33

Իրինա Խանամիրյան
ԾՆՈՂԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ 42

Էլեոնորա Զաքարյան, Մարինե Միքայելյան
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 49

Սոսե Խաչիբաբյան
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 61

Մանե Տոնոյան
ԾԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 68

Կարինե Հարությունյան
ՆԿԱՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 77

Արմինե Հայրապետյան, Լիլիթ Գարգրցյան
ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 84

ԱՆՁ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աննա Հակոբջանյան
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 97

Լիանա Սարգսյան, Սվետլանա Հարությունյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 113

Լիլիթ Ավետիսյան, Սոնա Մանուսյան
ԿԱՄԱՎՈՐԻ ՕԳՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ 128
Քնարիկ Առաքելյան
ԱՆՁԻ ԶՈՀԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 145
Մարիաննա Գևորգյան, Նարինե Խաչատրյան
ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 153
Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 163

ԱՆՁ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սոնա Մանուսյան
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ 179
Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, Մերի Գրիգորյան
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐ 193
Աստղիկ Սերոբյան
ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ԱՈՒՏՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 210
Անուշ Մկրտչյան
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ 227
Անի Մովսիսյան, Նարինե Խաչատրյան
ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 238

ԱՆՁ ԵՎ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Լուսինե Աղաբեկյան
ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ 257
Նարինե Ադամյան, Իրինա Խանամիրյան
ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ ԱՐԺԵԻՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 263
Կարինե Գրիգորյան
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՎԱԽԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ. ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 273

ԾԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Մանե Տոնոյան

Ծերերի և ծերացման խնդիրները ոչ վաղ անցյալում են սկսել գրավել ուսումնասիրողների ուշադրությունը: Մինչև 20-րդ դարի երկրորդ կեսը ծերերը՝ որպես սոցիալական խումբ, և ծերությունը՝ որպես մարդու կյանքի շրջափուլ, դուրս են մնացել գիտական ուսումնասիրությունների ուղեծրից: Ծերության մասին գիտելիքները չեն դարձել գիտական ուսումնասիրությունների առարկա, այլ կրել են կենցաղային բնույթ՝ սահմանափակված լինելով ծերության՝ որպես անկումնային, կարծրացած տարիքի մասին պատկերացումներով: Առհասարակ, ծերությունը՝ որպես սոցիալական կատեգորիա, ըստ Ֆ. Արիեսի, առանձնացվել է ընդամենը 20-րդ դարում [6]: Պատճառը, թերևս, ավագ սերնդի մարդկանց կյանքի նկատմամբ հետաքրքրության պակասն էր: Դրա մասին վստահեցնում են Գ. Կրայգը և Դ. Բոկումը, որոնց ուսումնասիրության համաձայն՝ դեռևս քառասունհիգ տարի առաջ այդ թեմային գործնականում նվիրված չէր և ոչ մի ուսումնասիրություն [3]:

Ծերերի մասին շրջանառվող տեղեկատվությունն այդ տարիքը պատկերում էր անկման և կորուստների տեսանկյունից: Այսպես, 1984 թվականին Ջ. Նասբաումը և Ջ. Ռոբինսոնը հրապարակեցին ուսումնասիրություն, որի նպատակն էր բացահայտել նախորդ տասնամյակում ծերերի մասին հանրաճանաչ պարբերականներում տեղ գտած հոդվածներում տարեց անձանց նկատմամբ դիրքորոշումների բնույթը: Ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ տարիների ընթացքում (այսինքն՝ 1970-1979 թվականներին) մամուլում պատկերված դիրքորոշումները հետզհետե դարձել են ավելի բացասական [12]: Սակայն վերջին շրջանում ծերացման խնդիրները դարձել են մի շարք գիտական ուսումնասիրությունների առարկա: Դրա գլխավոր պատճառը, կարծում ենք, 21-րդ դարում երկրագնդի ժողովրդագրական պատկերի փոփոխությունն է: Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության վերլուծությունների՝ սպասվում է, որ 2045 թվականին տարեց մարդկանց թվաքանակն առաջին անգամ կգերազանցի երեխաների թվաքանակը [9]: Այս երևույթը կոչվում է բնակչության ծերացում, ինչը պայմանավորված է ծնելիության կրճատմամբ, առողջապահության որակի բարելավմամբ, մահացությունների քանակի նվազմամբ, անհատական կյանքի տևողության երկարեցմամբ և այլ գործոններով:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա մեր պետությունը ևս ծերացած երկրների շարքում է: Ըստ միջազգային դասակարգման՝ երկրի բնակչությունը ծերացած է, եթե 60 և ավելի տարիք ունեցող անձինք գերազանցում են ողջ բնակչության 12%-ը, մինչդեռ Հայաստանում այդ ցուցանիշը, համաձայն ՄԱԿ բնակչության հիմնադրամի ազգաբնակչության բաժնի դեռևս 2010 թվականի հրապարակման, կազմել է 14.6%: Մեր երկրում բնակչության ծերացման հիմնական պատճառներն են երիտասարդների միգրացիան, ծնելիության նվազումը և կյանքի տևողության երկարումը [1]:

Այժմ լայն կիրառություն գտած ծերացում (ageing) եզրույթն առաջացնում է ծերությունն այլ տեսանկյուններից ևս դիտարկելու անհրաժեշտություն: Եթե ծերություն ասելով նկատի ունենք 65 տարեկանից սկսվող կենսասոցիալ-հոգեբանական երևույթների համախումբը, ապա ծերացում եզրույթը թույլ է տալիս ավելի գործընթացային և լայն տեսանկյունից ուսումնասիրել երևույթը: Այսպես, կենսաբանական տեսանկյունից մարդու առանձին օրգանների ծերացումը սկսվում է 65 տարեկանից դեռևս մի քանի տասնամյակ առաջ: Օրինակ, լսողության սրությունը և մասնավորապես բարձր հաճախականության ձայների նկատմամբ զգայունակությունը շարունակաբար անկում է ապրում 20 տարեկանից սկսած [3]: Վաղ և միջին հասունության տարիքին վերաբերող մի շարք փաստեր վկայում են, որ ծերացումը չի սահմանափակվում միայն տարեցության շրջանում տեղի ունեցող ֆիզիկական և հոգեսոցիալական փոփոխություններով: Ծերացման գործընթացները, թեև աննկատ, բայց սկսվում են ավելի վաղ շրջանում:

Հոգեբանական մակարդակում տարեցությանը նախորդող փուլերում ծերացման վերաբերյալ ուսումնասիրությունների առանցքում են հայտնվել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ծերության վերաբերյալ դիրքորոշումները, նախապաշարմունքները, կարծրատիպերը և այլն:

Ծերության վերաբերյալ պատկերացումները և դրանց ձևավորումը ծերացման հոգեբանական կողմերից մեկն են: Ծերացումն իր որոշակի դրսևորումներով, ինչպիսին է, օրինակ, ծերության վերաբերյալ պատկերացումների, կարծրատիպերի ձևավորումը, սկսվում է տարեցությունից շատ ավելի վաղ շրջանում: Ապացուցված է նաև, որ տարիքի վերաբերյալ կարծրատիպերը մարդիկ ձեռք են բերում ծերանալուց մի քանի տասնամյակ առաջ [10]:

Ծերության վերաբերյալ կարծրատիպային պատկերացումները բնորոշ են ինչպես արևմտյան, այնպես էլ արևելյան մշակույթներին: Ցավոք, այս խնդիրն արևելյան մշակույթում այնքան էլ բարձրաձայնված չէ արևմտյանի համեմատ: Ինչպես հայտնի է, արևելյան մշակույթում ծերերն ավելի կարևորված են, տարեց մարդն ընտանիքում հարգանք վայելող կերպար է:

Թերևս, սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ ծերության վերաբերյալ պատկերացումներն այս հասարակություններում չեն գրավել ուսումնասիրողների ուշադրությունը: Հայաստանն այդ շարքում բացառություն չի կազմում: Կենցաղային մակարդակում մեր մշակույթում ծերությունը զուգորդում են իմաստության հետ: Հեքիաթներում ճշմարտությունը որոնող հերոսը դիմում է հենց իմաստուն ծերունուն: Մեկ այլ օրինակ է «հին ոսկոր» արտահայտությունը, որը գործածում ենք ծերերի փորձառությունն ընգդծելու նպատակով: Իսկ, օրինակ, քրիստոնեական գաղափարներում Աստված պատկերվում է *իմաստունի* կերպարով, ինչը մենք հաճախ վերագրում ենք նաև ծերերին: Մեր խոսքի մշակույթում արմատացած է այնպիսի արտահայտություն, ինչպիսին է, օրինակ, «աստված պապիկը»: Կենցաղային դատողություններից կարելի է ենթադրել, որ ծերությունը (պապիկին) զուգորդելով իմաստության (Աստծո) հետ, մենք դրանում ավելի դրական, չափազանցված իմաստներ ենք դնում: Սակայն սա անհատական դատողությունների շղթա է, որի վերաբերյալ մենք դեռևս չունենք փաստացի ուսումնասիրություններ:

Ինչ վերաբերում է արևմտյան մշակույթում ծերության վերաբերյալ կարծրատիպերի գոյությանը, ապա որպես դրա օրինակ կարելի է նշել թեկուզ այն, որ 1970-ականներին ԱՄՆ-ում բարձրացավ *էյջիզմի* (ageism) հզոր ալիք: Ռ. Բաթլերի առաջարկած էյջիզմ եզրույթը նկարագրվում էր որպես տարեց անձանց նկատմամբ համակարգված խտրականության դրսևորման և կարծրատիպացման գործընթաց [7]: «Երիտասարդությունը հիանալի է» գաղափարը, որն ամրապնդվում էր լրատվամիջոցների, փոփ-մշակույթի և մշակութային կարծրատիպերի միջոցով, իր հերթին ավելի էր ընդգծում ծերացման բացասական կողմերը [14]: Ցավոք, երիտասարդությունը բացարձակեցնելու գաղափարը կամա թե ակամա մեր օրերում ևս ակտիվորեն խրախուսվում է լրատվամիջոցների, գործատուների, հեղինակավոր փառատոնների կազմակերպիչների և այլոց կողմից: Օ. Սիջյուվեյդը գրում է, որ այսօր էյջիզմը ներառում է ցանկացած նախապաշարմունք կամ խտրականություն, այդ թվում նաև հոգուտ ծերերի, սակայն ավելի հաճախ այն կրում է բացասական, քան դրական դրսևորում: Նա նաև համարում է, որ հենց այդ՝ իրականությանը չհամապատասխանող բացասական կարծրատիպերն են հիմք հանդիսանում տարեց անձանց նկատմամբ խտրականությունների և նախապաշարմունքային վերաբերմունքի դրսևորման համար [նույն տեղում]: Այդպիսով, կարելի է ենթադրել, որ հենց բացասական կարծրատիպերի գերակայության պատճառով է էյջիզմն առավել հաճախ կրում բացասական դրսևորում:

Ծերության մասին պատկերացումների վերաբերյալ իրականացվել են ուսումնասիրություններ իտալացիների, բրազիլացիների,

կոլումբիացիների, մեխիկոյաբնակների շրջանում: Այսպես, իտալացի տղամարդիկ ծերությունը զուգորդում էին հոգեբանական և ֆիզիկական անկման հետ, մինչդեռ իտալուհիները ծերությունն ասոցացնում էին խաղաղ և հանգիստ կյանքի հետ: Բացի այդ, երիտասարդներն ասոցացնում էին ծերությունը հիվանդության հետ, մինչդեռ տարեցները չէին արտահայտում նման զուգորդություններ [15]:

Ծերացման վերաբերյալ պատկերացումների (ռեպրեզենտացիաներ) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջին տարիքի անձանց և երիտասարդների պատկերացումները մեծ մասամբ նման են, սակայն տարիքին զուգընթաց՝ դրանք ավելի ոչ վերացական, կոնկրետ բովանդակություններ են ձեռք բերում: Կոլումբիայում Ռուբիանոյի իրականացրած ուսումնասիրությունը բացահայտում է, որ ծերության վերաբերյալ պատկերացումներում արտահայտված էին կարողությունների և առողջության անկման հետ կապված բնութագրիչներ [նույն տեղում]: Նմանատիպ արդյունքներ ստացվեցին նաև Կ. Ամպուդիայի և Լ. Մենդոզայի կողմից Մեխիկոյի բնակիչների շրջանում իրականացված ուսումնասիրությամբ. նրանք ևս ծերացումը զուգորդում էին ֆիզիկական ուժերի անկման, ինչպես նաև միայնակության հետ [13]: Մի այլ հետազոտություն՝ իրականացված Բրազիլիայում Օ. Միսիդիերիի և Լ. Թուրայի (2003) կողմից, փաստեց, որ զուգորդությունների առանցքում է գտնվում «իմաստություն» բնութագրիչը, որին հաջորդում էին բացասական բնութագրիչներ: Ջ. Վաչելկեն ստացավ արդյունքներ, որոնց առանցքն էր «իմաստություն» զուգորդությունը, որին հաջորդում էին առողջություն, ընտանիք զուգորդությունները [15]:

Պ. Մոլիների և Ջ. Վիդալի (Ֆրանսիա) հետազոտությունը դուրս է բերում նաև պատկերացումների որոշակի մշակութային երանգավորում [11]: Ըստ այդ ուսումնասիրության՝ ծերությունը նախևառաջ զուգորդվում է փորձառության հետ, սակայն դրան հաջորդում են այնպիսի զուգորդություններ, ինչպիսիք են հիվանդությունը, վարորդական վատ հմտությունները: Վերջին բնութագրիչն արտացոլում է մշակութային որոշակի առանձնահատկություն, եթե հաշվի առնենք, որ, օրինակ, Ֆրանսիայի Միջերկրածովյան ափերին յուրաքանչյուր 100 վարորդից 20-ը 65 և ավելի տարեկան է, նրանցից 5-ը՝ 75 և ավելի [5]:

Այսպիսով, ծերության վերաբերյալ պատկերացումներում հիմնականում արտահայտված են բացասական բնութագրիչները: Եթե անգամ առաջնային նշվում են այնպիսի դրական բնութագրիչներ, ինչպիսիք են իմաստությունը կամ փորձառությունը, ապա դրանց նախորդում կամ հաջորդում է բացասական, հազվադեպ՝ չեզոք զուգորդությունների մի շղթա:

Ցավոք, չգտնելով վերոնշյալ խնդրին վերաբերող հայաստանյան ուսումնասիրություններ՝ մենք իրականացրինք ուսումնասիրություն՝ փորձելով նախնական տվյալներ ձեռք բերել ծերության մասին մեր հասարակությունում իշխող պատկերացումների վերաբերյալ: Հետազոտությունն իրականացվել է Երևանում և նրա արվարձաններում: Ուսումնասիրությանը մասնակցել են 40-45 և 55-60 տարեկան 60-ական անձինք, ընդհանուր առմամբ՝ 120 մասնակից: Մենք ընտրել էինք 40-60 տարեկանի միջակայքը, քանի որ մի շարք հեղինակներ 40-65 տարեկանն են համարում միջին տարիք [4, 3]: Հաշվի առնելով այն, որ 60-65 տարեկանը մեր երկրում թոշակի անցման տարիքն է, մասնակիցների խմբում չեն ներգրավվել այս տարիքի անձինք, քանի որ նրանց պատկերացումներն առանձին ուսումնասիրության նյութ են: Ծերության վերաբերյալ պատկերացումները միջին տարիքում ուսումնասիրելու անհրաժեշտությունը հիմնավորվում է այնպիսի հասկացությամբ, ինչպիսին է պոտենցիալ աջակցության ցուցանիշը (ՊԱՑ), որը ցույց է տալիս, թե 15-64 տարեկան քանի պոտենցիալ աշխատող է բաժին ընկնում 65 և ավելի տարիքի մեկ անձին: Բնակչության ծերացմանը զուգընթաց՝ ՊԱՑ-ը ձեռք է բերում նվազման միտում: Ըստ ՄԱԿ տվյալների՝ այս ցուցանիշը կրճատվել է 12-ից 9 պոտենցիալ աշխատողի [9]:

Օգտվելով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2011 թվականի մարդահամարի տվյալներից՝ կարողացանք հաշվել, որ Հայաստանում, ըստ մշտական բնակչության ցուցանիշների, 2011 թվականին ՊԱՑ-ը կազմել է 6.7 [2]: Փաստորեն, 40-60 տարեկան մարդիկ գտնվում են բավական մեծ տնտեսական ծանրաբեռնվածության տակ: Միաժամանակ, նրանք մոտենում են հաջորդ՝ կենսաթոշակային տարիքին՝ հաղթահարելով կյանքի մեծ մասն արդեն ապրած լինելու միտքը, ինչը ծերացման ապրման լրացուցիչ բարդ հոգեբանական պահ է: Վերոնշյալ սոցիալ-հոգեբանական և տնտեսական պայմանների պարագայում էլ ավելի են կարևորվում այս տարիքի անձանց շրջանում ծերության վերաբերյալ պատկերացումների ուսումնասիրությունը և ծերացմանը, դրա ընդունմանն ու դրա՝ նաև որպես ռեսուրսային շրջանի հասկացմանն ուղղված հոգեբանական աջակցող ծրագրերի մշակումը և իրականացումը:

Ծերության մասին պատկերացումներն ուսումնասիրելու նպատակով մենք իրականացրինք ծերության վերաբերյալ ռեպրեզենտացիաների ուսումնասիրություն: 40-45 տարեկան անձանց խմբում ծերության մասին զուգորդությունների միջուկում հայտնվեց տխրություն բնութագրիչը, որին հաջորդում են իմաստություն, հարգանք, հանգստություն, խղճահարություն, թախիծ բառերը: 55-60 տարեկանների զուգորդությունների

միջուկում էր անհանգստություն բնութագրիչը, իսկ պերիֆերիկ մասում տեղ էին գտել հաջորդաբար՝ թոռներ, ալեհեր, տխրություն, ուրախություն, վախ բառերը: Նկատվում է, որ 40-45 տարեկան անձանց զուգորդություններում հավասարապես ներկայացված են և՛ դրական, և՛ բացասական բնութագրիչներ: 55-60 տարեկան անձանց պատկերացումներում ավելի շատ են բացասական զուգորդությունները, թեև երկու դեպքում էլ միջուկում գտնվող բնութագրիչը բացասական է:

Ծերության վերաբերյալ պատկերացումներն ավելի լավ հասկանալու նպատակով կազմեցինք հարցարան՝ ուղղված ծերերի ֆիզիկական և հոգեսոցիալական ոլորտների մասին պատկերացումների բացահայտմանը: Սակայն այստեղ կներկայացնենք միայն ուսումնասիրության մասնակիցների արտահայտած այն բնութագրումները, որոնք վերաբերում են առհասարակ ծեր մարդուն, ինչպես նաև ծերերի ֆիզիկական ոլորտի տարբեր կողմերին: Այդպիսով մենք փորձում էինք նախ պարզել՝ ինչպիսի բնութագրիչներ են վերագրում *ծեր մարդուն,* և պարզել մասնակիցների պատկերացումները ծերերի ֆիզիկական այնպիսի բնութագրիչների մասին, ինչպիսիք են ֆիզիկական գրավչությունը, արտաքին տեսքը, կենսակերպը, առողջական վիճակը և ֆիզիկական հնարավորությունները: Վերջին դեպքում մասնակիցներին առաջարկվում էր ընտրել դրական, բացասական կամ չեզոք պնդումներից մեկը: Այս տվյալներում մենք ներառել ենք քանակական տեսանկյունից գերիշխող պատկերացումները:

Այսպես, 40-45 տարեկան անձանց մեծամասնությունն ուներ չեզոք պատկերացումներ տարեց անձանց արտաքին տեսքի և կենսակերպի վերաբերյալ: Նրանք (համապատասխանաբար 75 և 65%) համարում են, որ ծերերը կարող են լինել ինչպես գեղեցիկ, այնպես էլ տգեղ, վարել ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ կենսակերպ: Ի դեպ, այս պատկերացումները բնորոշ էին նաև 55-60 տարեկան անձանց: Այսպես, 55-60 տարեկան անձանց մեծամասնությունն ուներ չեզոք պատկերացումներ ծերերի արտաքին տեսքի (70%), կենսակերպի (56.7%), ինչպես նաև արտաքին գրավչության (78.3%) վերաբերյալ: Այս խմբում ևս, ինչպես 40-45 տարեկան անձանց խմբում, ծերերի առողջության վերաբերյալ գործում էին բացասական պատկերացումներ:

Առողջության և ֆիզիկական հնարավորությունների մասին պատկերացումները 40-45 տարեկանների խմբում ունեին արտահայտված բացասական բնույթ: Մասնակիցների 88.3%-ը համոզված է, որ ծերերն առավել հաճախ են հիվանդանում տարբեր տեսակի հիվանդություններով՝ ավելի երիտասարդների համեմատ: 80%-ը կարծում է, որ ծերերի ֆիզիկական հնարավորություններն էականորեն անկում են ապրում: 40-45 տարեկան

տղամարդիկ, ի տարբերություն կանանց 86.6%-ի, ծերերի գրավչության վերաբերյալ ունեն դրական պատկերացումներ. նրանց 63.3%-ը համարում է, որ ծերերն արտաքնապես հրապուրիչ են:

55-60 տարեկանների խմբում միջսեռային տեսանկյունից տարբերվում էին միայն ֆիզիկական հնարավորությունների մասին պատկերացումները: Կանանց մեծամասնությունը (53.3%) չեզոք պատկերացումներ ուներ ծերերի ֆիզիկական հնարավորությունների մասին, մինչդեռ տղամարդկանց մեծամասնության (56.6%) պատկերացումները բևեռացած էին բացասական բնութագրիչի շուրջ:

Թեև ընդհանուր առմամբ ծերերի ֆիզիկական բնութագրիչների մասին պատկերացումները 40-45 և 55-60 տարեկան անձանց շրջանում համընկնում էին, սակայն 40-45 տարեկանների խմբում 20%-ով ավելի շատ էին այն ներկայացուցիչները, ովքեր ունեին բացասական պատկերացումներ ծերերի առողջական վիճակի վերաբերյալ: Ֆիզիկական հնարավորությունների մասին 40-45 տարեկանների 80%-ն ուներ բացասական պատկերացումներ, մինչդեռ այդ ցուցանիշը 55-60 տարեկանների խմբում կազմում էր ոչ ավելի, քան 46%: Այսպիսով, միջին տարիքի սկզբում ծերերի ֆիզիկական ոլորտի վերաբերյալ պատկերացումներն ավելի բացասական էին քան, միջին տարիքի վերջում:

Մասնակիցներին առաջարկվել էր նաև պատասխանել «Ո՞վ է ծեր մարդը» հարցին: Ստացված պատասխանները խմբավորվել են մի քանի բնութագրիչների շուրջ: Թե՛ 40-45, թե՛ 55-60 տարեկանների մեծամասնությունը ծեր մարդուն վերագրում է այնպիսի սոցիալ-տնտեսական բնութագրիչ, ինչպիսին է կենսաթոշակառու լինելու հանգամանքը: Դրան հաջորդող բնութագրիչը միջին տարիքի սկզբում բացասական է և դարձյալ վերաբերում է սոցիալական կարգավիճակին (տե՛ս Աղյուսակ 1): Փոխարենը 55-60 տարեկանների խմբում արտահայտված է ճանաչողական ոլորտին վերաբերող այնպիսի դրական պատկերացում, ինչպիսին է իմաստությունը: Հաջորդ ամենաշատ նշված երկու բնութագրիչներն էլ երկու խմբերում նույնն են՝ աննշան տոկոսային տարբերությամբ: Դրանք հաջորդաբար բացասական, ապա՝ դրական պատկերացումներ են:

Ծերերի մասին եղած բնութագրիչները խմբավորելով ըստ դրականի և բացասականի՝ պարզվեց, որ 40-45 տարեկանները, 55-60 տարեկանների համեմատ, ավելի շատ են հակված տալու բացասական բնութագրիչներ և ավելի քիչ՝ դրական բնութագրիչներ:

Աղյուսակ 1. **Ծեր մարդու վերաբերյալ պատկերացումները միջին հասունության սկզբում և վերջում**

Ո՞վ է ծեր մարդը	
40-45 տարեկան	**55-60 տարեկան**
Կենսաթոշակառու (24.3%)	Կենսաթոշակառու (22.3%)
Հասարակությունից դուրս մնացած մարդ (21.3%)	Իմաստուն մարդ (17.9%)
Ապրելու իմաստը կորցրած մարդ (15%)	Ապրելու իմաստը կորցրած մարդ (16.7%)
Վաստակած հանգիստը վայելող մարդ (13.5%)	Վաստակած հանգիստը վայելող մարդ (15.9%)
Իմաստուն մարդ (12.4%)	Հասարակությունից դուրս մնացած մարդ (11.9%)
Հիվանդ մարդ (10%)	Հիվանդ մարդ (7.8%)
Երջանիկ մարդ (2.5%)	Երջանիկ մարդ (5.7%)
Այլ պատասխաններ (1%)	Այլ պատասխաններ (1.8%)

Այսպիսով, ամփոփելով մեր ուսումնասիրության արդյունքները՝ ընդհանուր առմամբ պարզ է դառնում, որ միջին հասունության սկզբում և վերջում ծերերի վերաբերյալ պատկերացումները չեզոք կամ բացասական բնույթ են կրում: Ընդ որում՝ ավելի երիտասարդները (40-45 տարեկան) ունեն ավելի բացասական պատկերացումներ ծեր մարդու և առհասարակ ծերերի ֆիզիկական ոլորտի վերաբերյալ:

Արդի փուլում մի շարք երկրների գիտական օղակների, ինչպես նաև ՄԱԿ-ի կողմից իրականացվում են ուսումնասիրություններ, որոնք ուղղված են ծերացման խնդրին, դրա սոցիալ-տնտեսական և քաղաքական հետևանքներին: Հաշվի առնելով Հայաստանում ՊԱՑ-ը, ՄԱԿ բնակչության հիմնադրամ-Հայաստանի հրապարակումները, ինչպես նաև մեր ուսումնասիրությունից ստացված տվյալները, կարծում ենք, որ ծերության վերաբերյալ պատկերացումների խորքային ուսումնասիրությունները մեր երկրում առավել քան հրատապ են և կարող են հիմք ծառայել բարեհաջող ծերացմանը նպաստող պետական ռազմավարական ծրագրերի մշակման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ծերացում. ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ Հայաստան.* Հասանելի է http://unfpa.am/aging
2. *Մարդահամար 2011:* Հասանելի է http://www.armstat.am/file/doc/99478228.pdf
3. **Кайг, Г., Бокум, Д.,** *Психология развития,* СПб., Питер, 2008.
4. **Малкина-Пых, И.** *Возрастные кризисы взрослости*, Издательство Эксмо (Справочник практического психолога), 2005.
5. **Розенблюм, Д.** *Рулю все возрасты покорны.* Հասանելի է http://www.rusnetusa.com/article/car-age-discrimination-art-1061.php
6. **Шаповаленко, И.** *Возрастная психология* (Психология развития и возрастная психология), М., Гардарики, 2005.
7. **Butler, R.** Ageism: Another form of bigotry. *The Gerontologist,* 19(2), 1999, pp. 234-464.
8. **Gastaldi, A., & Contarello, A.** Una questione di età: Rappresentazioni sociali dell'invecchiamento in giovani e Anziani. *Ricerche di Psicologia,* 20(4), 2006, pp. 7-22.
9. *Global Health and Ageing, World Health Organization*. Հասանելի է http://www.nia.nih.gov/sites/default/files/global_health_and_aging.pdf
10. **Levy, B., Slade, M., Kunkel, S. & Kasl, S.** Longevity increased by positive self- perceptions of aging. *Journal of Personality and Social Psychology*, 83(2), 2002, pp. 251-270.
11. **Moliner, P. & Vidal, J.** Stéréotype de la catégorie et noyau de la représentation sociale. *Revue Internationale de Psychologie Sociale,* 16(1), 2003, pp. 157-176.
12. **Nussbaum, J. & Robinson, J.** Attitudes toward ageing. *Communication Research Reports*, 1 (1), 1984, pp. 21-27.
13. **Schulze, C.** Social representations of ageing shared by different age groups, *Temas em Psicologia,* Vol. 19, no 1, 2011, pp. 43 – 57.
14. **Sijuwade, Philip O.** Attitudes towards old age: a study of the self-image of aged, *Studies on Home and Community Science* 3, N 1, 2009, pp. 1-5.
15. **Wachelke, J., Contarello, A.** Social representations on aging: Structural differences concerning age group and cultural context. *Revista Latinoamericana de Psicología*, Vol. 42, N 3, 2010, pp. 367-380.